15
ՆՈՅԵՄԲԵՐ
2023

Luys Lnyu®

“The humanitarian situation in Nagorno-Karabakh has turned catastrophic”

The Economist

ԱՄՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՄԱՆԸ

ԱՄՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՄԱՆԸ

Ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղի ավելի քան 100 հազար հայ բնակիչներ ստիպված էին լքել իրենց հայրենիքը և բռնի տեղափոխվել Հայաստանի Հանրապետություն: Այդ դեպքերը գտել են իրենց արձագանքը ամերիկյան մամուլում՝ ստանալով տարբեր գնահատականներ և մեկնաբանություններ՝ կապված իրադարձությունների և զարգացումների հետ: Ստորև առանձնացրել ենք այն հիմնական կետերն ու ազդակները, որոնք տեղ են գտել ամերիկյան խոշոր զանգվածային լրատվամիջոցներում:

«ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐ» ԵԶՐՈՒՅԹԸ՝ «ՀԱՅԵՐ ԿԱՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԵՆ

Առաջին և գլխավոր խնդիրը, որին կարելի է բախվել ամերիկյան այնպիսի լրատվամիջոցներում, ինչպիսիք են «Associated Press»-ը[1], «Wall Street Journal»-ը[2], «Fox News»-ը[3], NPR-ը[4] և այլն, այն է, որ վերջիններս լուսաբանում են Լեռնային Ղարաբաղի բնակչությանը «անջատողականներ» եզրույթի կիրառմամբ: «Լեռնային Ղարաբաղի իշխանություն» սահմանման փոխարեն կիրառվում է «անջատողական կառավարություն» եզրույթը: Խոսույթի նման փոփոխությունը կարող է վկայել երկու

[1] **Demourian A.,** More than 80% of Nagorno-Karabakh's population flees as future uncertain for those who remain, https://apnews.com/article/nagorno-karabakh-azerbaijan-armenia-separatist-government-5f7b940643a3d6e63a6f3d512158e51a, (01.11.23).
[2] **Grove Th., Luxmoore M.,** Armenia-Azerbaijan Conflict: What to Know About Nagorno-Karabakh, https://www.wsj.com/world/europe/armenia-azerbaijan-conflict-nagorno-karabakh-f1b0d1ce,
[3] Over 70% of population in Nagorno-Karabakh flees as separatist country reintegrates with Azerbaijan, https://www.foxnews.com/world/over-70-population-nagorno-karabakh-flees-separatist-country-reintegrates-azerbaijan, (01.11.23).
[4] Azerbaijan moves to reaffirm control of Nagorno-Karabakh as the Armenian exodus slows, https://www.npr.org/2023/10/02/1203150145/azerbaijan-moves-to-reaffirm-control-of-nagorno-karabakh-as-the-armenian-exodus-,(01.11.23).

իրողության մասին. կա՛մ ԱՄՆ-ի որոշ շրջանակներ փորձում են ապալեգիտիմացնել Լեռնային Ղարաբաղի տարածքում գոյություն ունեցող հայկական կազմավորումը, կա՛մ Ադրբեջանը հսկայական գումարներ է ծախսում այդ նպատակին հասնելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանությունն այդ օրերին առանձնապես աչքի չի ընկել ակտիվ գործունեությամբ, խոսույթի փոփոխություն կամ դրա փորձ պաշտոնապես տեղի չի ունեցել:

ԱՄՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ՍԱՄԱՆԹԱ ՓԱՈՒԵՐԻ ԱՅՑԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Ամերիկյան լրատվամիջոցներն անդրադարձել են նաև ԱՄՆ պաշտոնական արձագանքին՝ Արցախում ստեղծված իրավիճակի հետ կապված: Կարելի է առանձնացնել արձագանքի երկու ուղղություն: Առաջինը՝[5] Հայաստանին ֆինանսական օգնության տրամադրումը, մասնավորապես՝ Բայդենի վարչակազմի կողմից հայտարարված 11.5 միլիոն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնության տեսքով: Երկրորդը՝[6] հայտարարություն, որով կոչ էր արվում հարգել Հայաստանի «ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու ժողովրդավարությունը»: Այս հայտարարությունն արվել էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) տնօրեն Սամանթա Փաուերի՝ Հայաստան և Ադրբեջան կատարած այցի ժամանակ: Այս նույն հայտարարությունը տեղ էր գտել նաև Հայաստանի վարչապետին ուղղված՝ ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենի նամակում, որը Փաուերը անձամբ էր փոխանցել: Սամանթա Փաուերի այս այցը և ԱՄՆ-ի հայտարարված օգնությունը Հայաստանին լուսաբանվել են ամերիկյան մի շարք լրատվամիջոցներում՝ համանմամբ եզրույթների կիրառմամբ:

[5] **Reevell P.,** Nagorno-Karabakh enclave emptied after entire ethnic Armenian population flees, https://abcnews.go.com/International/nagorno-karabakh-enclave-emptied-entire-armenian-population-flees/story?id=103655356, (02.11.23).
[6] **Dress B.,** US envoy arrives in Armenia amid fears of ethnic cleansing in Nagorno-Karabakh, https://thehill.com/homenews/4222323-us-envoy-arrives-in-armenia-amid-fears-of-ethnic-cleansing-in-nagorno-karabakh/, (02.11.23).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՎԱՏԹԱՐԱՑՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մյուս առանցքային կետը, որը լայնորեն լուսաբանվել է ամերիկյան լրատվամիջոցներում, Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների վատթարացումը և Արցախում ռուս խաղաղապահների խնդիրն է:

Նախ, ամերիկյան ԶԼՄ-ները ընդգծել են այն փաստը, որ Հայաստանի կառավարությունը մեղադրել է ռուս խաղաղապահներին հայ բնակչության պաշտպանությունը ձախողելու մեջ[7], ինչը նաև հանգեցրել էր զանգվածային բողոքի ցույցերի Հայաստանում, այդ թվում՝ Երևանում, Ռուսաստանի դեսպանատան դիմաց[8]:

Սակայն ընդգծվել է նաև, որ երկու երկրների միջև լարվածությունը ծագել է դեռևս Լեռնային Ղարաբաղի հայերի էթնիկ զտումից առաջ: Պատճառների թվում հատկապես ընդգծվել են երկուսը՝ ԱՄՆ-ի հետ համատեղ զորավարժությունները և Հռոմի ստատուտի վավերացումը Հայաստանի խորհրդարանի կողմից[9]: Ամերիկյան լրատվամիջոցների կողմից ընդգծված մեկ այլ պատճառ էլ այն է, որ Հայաստանի կողմից մարդասիրական օգնություն է ուղարկվել Ուկրաինա և Հայաստանի վարչապետի կինը այց է կատարել Ուկրաինա: CNN-ը նույնիսկ մեջբերել է Հայաստանի վարչապետի խոսքերը առ այն, որ. «Մենք Ռուսաստանի դաշնակիցը չենք Ուկրաինայի հետ պատերազմում»:[10]

Ոչ պակաս կարևոր անդրադարձ է Ռուսաստանի գործողությունների վերլուծությունը ԱՄՆ մամուլում: «The New York Times»-ը եզրակացնում է, որ Ռուսաստանը գործել է իր շահերից ելնելով. ՌԴ-ն երես է թեքել Հայաստանից՝ անցնելով Ադրբեջանի կողմը, որը «շատ ավելի հարուստ է և ռազմական առումով ավելի ուժեղ, քան Հայաստանը» և «առաջարկում է ավելի մեծ շուկա ռուսական ապրանքների, մասնավորապես՝ զենքի համար, դեռ ավելին՝ իր տարածքով են անցնում տարանցիկ ճանապարհներ և երկաթուղային գծեր, որոնք կենսական

[7] Thousands of Armenians flee Nagorno-Karabakh as Azerbaijan reclaims separatist region, https://www.foxnews.com/world/thousands-armenians-flee-nagorno-karabakh-azerbaijan-reclaims-separatist-region, (02. 11.2023).
[8] **Higgins A.,** As Armenia and Azerbaijan Clash, Russia Is a Distracted Spectator, https://www.nytimes.com/2023/09/21/world/europe/russia-armenia-azerbaijan-karabakh.html, (11.2023).
[9] Armenia grapples with multiple challenges after the fall of Nagorno-Karabakh, https://abcnews.go.com/International/wireStory/armenia-grapples-multiple-challenges-after-fall-nagorno-karabakh-103633854, (03.11.2023).
[10] **Sebastian C., et al.,** Nagorno-Karabakh crisis lays bare Armenia's deteriorating relations with Russia, https://edition.cnn.com/2023/09/20/asia/nagorno-karabakh-russia-reaction-intl/index.html, (03.11.2023).

նշանակություն ունեն Իրանի և Թուրքիայի հետ Ռուսաստանի առևտուրն ապահովելու համար»:[11]

Այսպիսով, հայ-ռուսական հարաբերությունների մասին ամերիկյան լրատվամիջոցների լուսաբանումը հիմնվում է երկու երկրների միջև առկա լարվածության ու խնդիրների վրա՝ հատուկ շեշտադրելով Արևմուտքին առնչվող կամ հուզող հարցերը: Բնական է, որ հակառուսական տրամադրությունները, որոնք տիրում են ամերիկյան հանրության շրջանում, լրջագույն ազդեցություն են ունենում նաև Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ լուսաբանման գործընթացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ «ԱՐԵՎՄՏԱՄԵՏ» ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունները բազմիցս լուսաբանվել են ամերիկյան մամուլում, և Նիկոլ Փաշինյանի արևմտամետ ուղղվածությունը նույնպես ներկայացվել է հենց այս համատեքստում: Որոշ լրատվական գործակալություններ, որոնցից է, օրինակ, «Newsweek»-ը[12], ԼՂ-ի կազմալուծումը ներկայացրել է որպես «Նիկոլ Փաշինյանի հաղթանակ»՝ ռեալպոլիտիկ առումով, քանի որ դա «քաղաքական բեռ էր և խոչընդոտ տարածաշրջանային խաղաղության և ինտեգրման համար»: Այդ հոդվածի համաձայն. «Խաղաղությունը թույլ կտա Երևանին համագործակցել Ադրբեջանի և Թուրքիայի հետ, ինչը կարող է կյանքի կոչել Փաշինյանի նպատակը՝ փոխել Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորը դեպի Արևմուտք»:

Որոշ այլ լրատվամիջոցներ ուշադրության են արժանացրել այն փաստը, որ Փաշինյանը և իր կառավարությունը քննադատաբար են մոտենում Մոսկվային ու վերջինիս խաղաղապահներին, և մատնանշել են այն փոխադարձ մեղադրանքները[13], որոնք վերջերս հնչեցրել են Մոսկվան և Երևանը միմյանց հասցեին: Փաշինյանը ներկայացված է որպես ղեկավար, ով «ձգտել է ամրապնդել կապերը ԱՄՆ-ի[14] և ԵՄ-ի հետ», մինչդեռ Ռուսաստանի նախագահը, ով, մեղմ ասած, դեմ է այսպես կոչված

[11] **Higgins A.,** նշվ. աշխ.
[12] **Epstein J.,** How Nagorno Karabakh's Fall Could Help Armenia | Opinion, https://www.newsweek.com/how-nagorno-karabakhs-fall-could-help-armenia-opinion-1831816, (03.11.23).
[13] Thousands of Armenians flee Nagorno-Karabakh as Azerbaijan reclaims separatist region, https://www.foxnews.com/world/thousands-armenians-flee-nagorno-karabakh-azerbaijan-reclaims-separatist-region, (03.11.23).
[14] **Halpin A.,** A Bitter Conflict Ends by Force, Not Diplomacy, https://www.bloomberg.com/news/newsletters/2023-09-20/a-bitter-conflict-in-nagorno-karabakh-ends-by-force-not-diplomacy, (06.11.23).

«գունավոր հեղափոխություններին», Փաշինյանին «կասկածանքով» է վերաբվերում: Ամերիկյան մամուլում նաև իրենց արձագանքն են գտել Փաշինյանի որոշ մեկնաբանություններ, որոնց թվում են՝ քննադատությունը Ռուսաստանի հասցեին, Հայաստանում ռուսական ռազմաբազայի շարունակական ներկայության անհրաժեշտության բացակայությունը և Հայաստանի հարաբերությունները դիվերսիֆիկացնելու անհրաժեշտությունը:[15] Փաստորեն, ամերիկյան լրատվամիջոցներն առավելապես կենտրոնացել են հակառուսական հայտարարությունների վրա, սակայն որևէ հակառուսական գործնական քայլի չեն փորձել անդրադառնալ:

ԱՄՆ-Ի ՁԵՌՆՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Այն փաստը, որ ԱՄՆ-ը ադրբեջանական ագրեսիայից հայերի պաշտպանվելուն օգնող բավարար քայլեր չի ձեռնարկել և որևէ կերպ պատասխանատվության չի ենթարկել Ադրբեջանին իր գործողությունների համար, տեղ է գտել ԱՄՆ մամուլում: Որոշ լրատվամիջոցներ պնդում են, որ ԱՄՆ-ի ակտիվությունն է անհրաժեշտ ադրբեջանական հնարավոր նոր հարձակումը կանխելու և, ընդհանուր առմամբ, Հայաստանի հետ առավել սերտ հարաբերություններ հաստատելու համար: Այդուհանդերձ, նման հոդվածները սակավաթիվ են, և դրանց մի մասը գրված է ազգությամբ հայ հեղինակների կողմից: Նմանօրինակ հրապարակումներ են «Times» ամսագրում լույս տեսած երկու հոդվածները: Առաջինում շեշտվում է, որ «չնայած ԱՄՆ-ը ողջունում է Հայաստանի ժողովրդավարությունը, այն շատ զգույշ է քննադատելու իր նավթաագրեսորին»: Ըստ հոդվածի՝ ԱՄՆ-ն կարող էր կանխել հայերի էթնիկ զտումը Լեռնային Ղարաբաղում և այժմ էլ կարող է կանխել Հայաստանի դեմ հարձակումը, սակայն գործուն քայլեր չկան[16]: Նույն լրատվականի մեկ այլ հոդվածում ընդգծվում է, որ ԱՄՆ-ը ոչ միայն աչք է փակել Ադրբեջանի գործողությունների վրա, այլև «բազմիցս քաջալերել և

[15] **Trofimov Y.**, Armenia Seeks Western Support as Relations With Russia Deteriorate, https://www.wsj.com/world/europe/armenia-seeks-western-support-as-relations-with-russia-deteriorate-cadce421,(06.11.23).
[16] **Maghakyan S.,** Azerbaijan Could Invade Armenia. The U.S. Must Intervene, https://time.com/6327596/turkey-armenia-azerbaijan-invade-united-states/, (06.11.2023).

լեգիտիմացրել է Ադրբեջանի բռնի դիվանագիտությունը՝ հրաժարվելով Ադրբեջանին պատասխանատվության ենթարկել շրջափակում իրականացնելու համար»:[17]

Ուշադրության է արժանի նաև մի հոդված, որը Սամանթա Փաուերի այցի հետ կապված հրապարակվել է «Washington Examiner» լրատվականում: Հոդվածի հեղինակը մեղադրել է Փաուերին՝ երեսպաշտության մեջ, քանզի վերջինս լռել է Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ հարձակման ժամանակ: Նման քաղաքականություն տարվում էր նաև նախագահ Բայդենի կողմից, ով թեև ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, սակայն մյուս կողմից շարունակում է ռազմական օգնություն տրամադրել Ադրբեջանին: Այսպիսով, Սպիտակ տունն ու Պետդեպարտամենտը կիրառում են «երկու կողմերին» ուղղված կոչերի մոտեցումը՝ հավասարության նշան դնելով էթնիկ զտման ենթարկվողների և ենթարկողների միջև:[18]

ԱՄՆ ակտիվության պակասի մասին վերջին շրջանում շատ է բարձրաձայնվում ԱՄՆ Հանրապետական կուսակցության նախագահի թեկնածու Վիվեկ Ռամասվամիի կողմից: Վերջինիս խոսքերը տեղ են գտել ԱՄՆ մի քանի լրատվականներում: Ըստ նրա՝ «20 տարի ԱՄՆ ղեկավարությունը թույլ է տվել Ադրբեջանի բռնապետական ռեժիմին ձեռք բերել ԱՄՆ զենքեր, որոնք այժմ օգտագործվում են հայ քրիստոնյաներին սպանելու համար: Այժմ մենք լուրեր ենք ստանում, որ Արցախի էթնիկ զտումները բավարար չեն, և որ Ադրբեջանը կանգ չի առնի այնքան ժամանակ, քանի դեռ չեն բաժանել Հայաստանը և բացել Զանգեզուրի միջանցքը դեպի Թուրքիա»:[19] Այստեղ, բնականաբար, պետք է հասկանալ, որ նախընտրական փուլում նման հայտարարությունները սերտորեն կապված են հայ ընտրողների ձայները ստանալու նպատակի հետ: Նմանօրինակ մի շարք հայտարարություններ արվում են նաև դեմոկրատ կոնգրեսականների և սենատորների կողմից, ովքեր Հայկական հանձնախմբի անդամ են և ունեն բարեկամական հարաբերություններ հայ համայնքի հետ:

---

[17] **Galitsky A., Iskanjyan G.,** The U.S. Keeps Failing Armenians in Nagorno-Karabakh, https://time.com/6316001/us-failures-nagorno-karabakh/, (06.11.2023).
[18] **Rubin M.,** Power failure: Biden official turns blind eye to genocide, https://www.washingtonexaminer.com/opinion/power-failure-biden-official-turns-blind-eye-to-genocide, (07.11.2023).
[19] https://twitter.com/VivekGRamaswamy/status/1717345146574889050, **Mccormack J.,** What Ramaswamy Said about Israel, Armenia, and 'Financial and Corrupting Influences' in the U.S. Foreign Policy, https://www.nationalreview.com/corner/what-ramaswamy-said-about-israel-armenia-and-financial-and-corrupting-influences-in-u-s-foreign-policy/, (07.11.2023).

Եվս մեկ հետաքրքիր հոդված հրապարակվել էր «The Economist» պարբերականում: Վերջինս Հայաստանին օգնելու հարցում առանձնացնում է առաջիկա և երկարաժամկետ հեռանկարներում անհրաժեշտ քայլեր: Մոտ ապագայում արևմտյան կառավարությունները պետք է օգնեն Հայաստանին՝ ԼՂ փախստականների և Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու հարցերում: Իսկ երկարաժամկետ հեռանկարում, ըստ հոդվածի, Արևմուտքը պետք է աջակցի Հայաստանի ջանքերին՝ նվազեցնելու կախվածությունը Ռուսաստանից և հորդորի Թուրքիային կարգավորելու հարաբերությունները Հայաստանի հետ և բացելու սահմանները[20]:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

[20] A humanitarian disaster is under way in Nagorno-Karabakh, The Economist, https://bitly.ws/ZeFE, (07.11.23).

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*